22.09.26 - 24.09.26
16:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 311 լսարան

Ս.թ. սեպտեմբերի 22-ին՝ ժամը 16:00-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում կմեկնարկի «Թվային իրավունքների քաղաքական փիլիսոփայություն» խորագրով դասախոսությունների շարքը:

Լյուվենի կաթոլիկ համալսարանի (Բելգիա) փիլիսոփայության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ակսել Գոսիերիեսը «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ Լևոն Բաբաջանյանի հետ կանցկացնի ընդհանուր 7 ժամ դասախոսություն: Շարքի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել քաղաքական փիլիսոփայության հիմնական մեթոդներին և դրանց կիրառությանը թվային միջավայրում իրավունքների, ազատությունների ու պատասխանատվության խնդիրների վերլուծության մեջ:

Հանդիպումները տեղի կունենան.

- **սեպտեմբերի 22-ին՝ ժամը 16:00-19:00-ն,**
- **սեպտեմբերի 23-ին՝ ժամը 17:00-19:00-ն,**
- **սեպտեմբերի 24-ին՝ ժամը 17:00-19:00-ն:**

Եռօրյա ծրագիրը ներառում է չորս թեմա.

1. ***Քաղաքական փիլիսոփայության մեթոդաբանական հիմքերը,***
2. ***Մինչև 15 տարեկանների մուտքը սոցիալական մեդիա արգելելու հիմնավորվածությունը,***
3. ***Պատգամավորների պատասխանատվությունը խորհրդարանում կամ սոցիալական մեդիայում ստելու կապակցությամբ,***
4. ***Սպամի բարոյական ու քաղաքական խնդիրները և դրանց լուծման ուղիները:***

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am